

**«ԻԳՈՎԱԶԴ» ՍՊԸ-ն խորհուրդ է տալիս igovazd.am կայքից օգտվելուց առաջ ուշադիր կարդալ սույն Համաձայնագիրը: Մեր Կայքը օգտագործելով՝ Դուք համաձայնվում եք սույն Համաձայնագրի դրույթների հետ:**

**Կայքի օգտագործման պայմանները և գաղտնիության քաղաքականությունը**

1. Սույն կայքի (այսուհետ՝ Կայք) օգտագործման պայմաններ և գաղտնիության քաղաքականությամբ (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են «ԻԳՈՎԱԶԴ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ինտերնետային կայք էջի և դրանում առկա Անձնական էջի բացման, սպասարկման, օգտագործման կանոնները: Խնդրում ենք ուշադիր կարդալ Պայմանները, քանի որ այն հանդիսանում է կայքի օգտագործման վերաբերյալ Ընկերության և Ձեր (օգտատիրոջ) միջև կնքվող համաձայնագիր: Համաձայնագրից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: Եթե սույն Օգտագործման պայմանների և գաղտնիության քաղաքականության որևէ դրույթ ճանաչվում է անվավեր, մնացած դրույթները շարունակում են գործել և համարվում են վավեր:

**2. Դուք իրավունք ունեք՝**

- ա. Կայքից օգտվելու համար անվճար բացել անձնական էջ՝ անցնելով որոշակի նույնականացման գործընթաց,
- բ. Ունենալով անձնական էջ սահմանված ձևաչափերին համապատասխան անվճար տեղադրել հայտարարություններ, նկարներ և այլ նյութեր,
- գ. Ձեր հայտարարությունը (ները) գովազդելու համար օգտվել Կայքի վճարովի ծառայություններից,
- դ. Ծառայությունների համար վճարել Կայքում նախատեսված անկանխիկ վճարման եղանակներով: Կայքի Ձեր անձնական դրամապանակին փոխանցված գումարը վերադարձման ենթակա չէ, չեք կարող փոխանցել այլ օգտատիրոջ դրամապանակի հաշվին: Տեղադրված հայտարարությունը ստուգելուց և վճարումից հետո Կայքի գովազդային ծառայությունները սկսում են գործել մինչև մեկ ժամվա ընթացքում,

ե. Կայքի աշխատանքների հետ կապված բողոքները հետադարձ կապի միջոցով փոխանցել Ընկերությանը: Բողոքները կքննվեն դիմումը ստանալուց հետո 1 օրվա ընթացքում,

զ. Միակողմանի դադարեցնել Կայքում գրանցումը՝ առանց նախազգուշացման և պատճառաբանման,

ի. Դադարեցնել Ձեր կողմից պատվիրված գովազդային ծառայությունները, սակայն վճարումը սառեցման ենթակա չէ, եթե այն չի գերազանցում 1000 ՀՀ դրամը: Բացի սույն դրույթից Գովազդային ծառայությունների մասով առանձին կանոնների մասին ծանոթացեք [igovazd.am](http://igovazd.am) կայքում:

լ. Ստանալ տեղեկություններ Կայքի Ձեր անձնական էջի և գովազդային ծառայությունների վերաբերյալ:

### **3. Դուք իրավունք չունեք՝**

ա. Կայքում առկա տվյալները պատճենահանել, վերացուցադրել, փոփոխել, հրապարակել կամ ներբեռնել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է Կայքից սույն Պայմանների համապատասխան բնականոն օգտվելու համար (օրինակ՝ տվյալների պահումը համակարգչի RAM հիշողությունում),

բ. Կայքից օգտվելիս խախտել Ընկերության կամ այլ անձանց իրավունքներն ու շահերը, կամ կատարել որևէ գործողություն, որը կարող է դժվարեցնել կամ անհնարին դարձնել կայքի այլ օգտագործողների կողմից դրանից օգտվելը,

գ. Կայքից օգտվելիս տարածել անօրինական, վիրավորական, գրպարտող, քաղաքական, էրոտիկ, պոռնո կամ անթույլատրելի այլ նյութեր և տեղեկություններ: Հայաստարարության բոլոր չափանիշները պետք է համապատասխանեն իրականությանը,

դ. Կիրառել որևէ սարք կամ ծրագրային ապահովում, որը խոչընդոտում է Կայքի բնականոն աշխատանքին,

ե. Օգտագործել որևէ սարք, ավտոմատ ծրագրային ապահովում կամ իրականացնել գործընթաց (spiders, robots, etc.), որն ուղղված է Կայքի կամ դրա առանձին մասերի փոփոխություններին հետևելուն կամ պատճենահանելուն,

զ. Փորձել մուտք գործել կամ այլ կերպ չարտոնված մուտքի հնարավորություն ստանալ Կայքի այն բաժիններ, որտեղ Ձեր մուտքի հնարավորությունը սահմանափակված կամ արգելված է,

է. Կատարել այլ գործողություն, որը խախտում է կայքում հրապարակված նյութերի հետ կապված մտավոր սեփականության իրավունքները կամ Կայքի բնականոն աշխատանքը, ի. Տեղադրել նկարներ, տեսանյութեր, որոնք չեն համապատասխան տվյալ հայտարարությունների բաժնին,

լ. Յուրաքանչյուր հայտարարություն պետք է ներկայացնի միայն մեկ ապրանք կամ ծառայություն:

5. Կայքից օգտվելիս արգելվում է այլ անձանց տրամադրել կամ հրապարակել որևէ անձնական տեղեկատվություն:

6. Կայքը կարող է հղումներ պարունակել, որոնք Ձեզ թույլ կտան հեշտությամբ այլ Կայքեր այցելել: Այդուհանդերձ, այդ հղումների միջոցով Կայքից հեռանալուց հետո խնդրում ենք նկատի ունենալ, որ Կայքը որևէ վերահսկողություն չի իրականացնում մյուս կայքերի նկատմամբ: Հետևաբար՝ Ընկերությունը չի կարող պատասխանատու լինել այն տեղեկությունների պաշտպանության և գաղտնիության համար, որոնք Դուք հաղորդում եք մյուս կայքերին, որոնք չեն ղեկավարվում սույն գաղտնիության քաղաքականությամբ:

7. Ընկերությունը իր հայեցողությամբ կարող է փոփոխել սույն Օգտագործման պայմանները և գաղտնիության քաղաքականությունը կամ թարմացնել Կայքի տարբեր բաժիններ ցանկացած ժամանակ: Ծարունակելով օգտագործել Կայքը՝ Դուք հավաստում եք, որ համաձայն եք կատարված բոլոր փոփոխությունների հետ:

8. Դուք պատասխանատվություն եք կրում Անձնական էջում գործողությունների իսկության, ամբողջականության, արժանահավատության և դրանից բխող հետևանքների համար: Ձեր անձնական էջում կատարվող գործողությունները Կայքի կողմից դիտարկվելու են որպես Ձեր կամքի ուղղակի և իրական արտահայտում: Կայքը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից կատարված տպագրական և այլ սխալների համար:

9. Դուք պարտավորվում եք պահպանել Անձնական էջ մուտք գործելու համար անհրաժեշտ տեղեկությունների գաղտնիությունը, չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հայտնի չդարձնել Ձեր Անձնական էջի բացման և շահագործման համար օգտագործվող գաղտնաբառերը, կոդերը և այլ տվյալները կամ կատարել գործողություններ, որոնք կարող են հանգեցնել այդպիսի տվյալներն երրորդ անձանց հայտնի դառնալուն:

## **10. Կայքն իրավունք ունի**

ա. Մեփական նախաձեռնությամբ՝ ժամանակավորապես, ամբողջովին կամ մասամբ դադարեցնել Ձեր Անձնական էջի միջոցով ծառայությունների մատուցումը՝ համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնելու կամ վերջինիս անվտանգությունը, հուսալիությունը և անխափան աշխատանքն ապահովելու նկատառումներով,

բ. Կասեցնել կամ դադարեցնել Ձեր Անձնական էջի օգտագործումը սույն Պայմանների խախտման պարագայում, ինչպես նաև այն դեպքում, երբ Ընկերությունը հիմքեր ունի ենթադրելու, որ Ձեր Անձնական էջն օգտագործվում է երրորդ անձանց կողմից,

գ. Սույն Պայմանների խախտման պարագայում դադարեցնել գովազդային ծառայությունները և գրոյացնել տվյալ հայտարարության համար նախատեսված վճարումները:

դ. Հայտարարությունների պիտանելիության ժամկետից և քանակից ելնելով՝ կիրառել սահմանափակումներ,

ե. Կայքում մատուցվող ծառայությունների որակը պահպանելու նպատակով՝ սահմանափակել Ձեր հայտարարությունների քանակը և գործողությունները: Խմբագրել և սրբագրել հայտարարությունները,

զ. Ողջամիտ կասկածների դեպքում Ձեզնից պահանջել անձը հաստատող և տվյալ տնտեսական գործունեությունը հավաստող փաստաթղթեր: Փաստաթղթերի չտրամադրումը և կեղծ տեղեկությունների փոխանցումը կարող է հանդիսանալ հիմք Ձեր անձնական էջը առանց զգուշացնելու փակելու համար:

11. Կայքի կողմից Ձեր անձնական տվյալների օգտագործումը իրականացվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Տվյալ Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ձեր՝ igovazd.am-ում որևէ ծառայությունից օգտվելու կամ կայքում գրանցվելու պահից և տևում է անժամկետ:

**Ձեր բանկային քարտը կարող է մերժվել մի շարք պատճառներով, ինչպիսիք են՝**

- Տվյալների մուտքագրման սխալ: Ստուգեք մուտքագրված տվյալները և կրկնեք վճարումը:
- Քարտի վրա ոչ բավարար գումար: Օգտագործեք ձեր քարտը կամ մեկ այլ քարտ:
- Դուք կատարում եք վճարումը այն քարտով, չի ընդունվում Tickets.am կայքի կողմից: Ընդունվում են ArCa Classic, Visa և MasterCard (ներառյալ Visa Electron և Maestro) քարտերը: Եթե ձեր քարտը պատկանում է այլ համակարգի, դուք չեք կարող օգտագործել այն վճարումը կատարելու համար: Խնդրում ենք ընտրել այլ հասանելի վճարային մեթոդ կամ վճարեք մեկ այլ քարտով:
- Քարտի արգելափակում համացանցում վճարումների կատարելու համար: Կապ հաստատեք բանկի Հաճախորդների սպասարկման թիմի հետ առցանց վճարման եղանակը ակտիվացնելու համար:
- Ձեր քարտի նկատմամբ առկա է վճարման կամ օրական սահմանագծի կիրառում: Կապ հաստատեք բանկի Հաճախորդների սպասարկման թիմի հետ առցանց վճարային սահմանագիծը չեղարկելու համար:
- Քարտի ժամկետի սպառում: Կապ հաստատեք բանկի Հաճախորդների սպասարկման թիմի վերաթողարկման համար:
- Ձեր քարտում պետք է առկա լինի նվազագույն փոխհատուցման ոչ ենթակա գումար, որը սահմանվում է բանկի կանոնների համաձայն: Կրկնեք վճարումը:
- Համացանցի հետ խնդիրներ, կապի ընդհատում բանկի գործարքն իրականացնող բաժնում:
- Դուք օգտագործում եք հին բրաուզերի տարբերակ (Internet Explorer 7 և ավելի հին տարբերակ, Opera 9 և ավելի հին տարբերակ): Թարմացրեք ձեր բրաուզերը, մաքրեք քուքիները, մուտք գործեք և կրկնեք վճարումը:
- Եթե օգտագործում եք համացանցը բջջային ծրագրի միջոցով, վճարման հետ կապված խնդիրները կարող են ի հայտ գալ դինամիկ IP հասցեից: Փոխեք այն ցանցի կարգավորումների մեջ և կրկնեք վճարումը:
- Գործարքը համարվում է կասկածելի, եթե՝
  - i. Առցանց վճարումը կատարվել է մեկ այլ երկրում, այլ ոչ թե հաճախորդի քարտը տրամադրող երկրում:
  - ii. Քարտը անցել է սև ցուցակի մեջ խարդախությունը կանխող համակարգի կողմից:

iii. Քարտը տրվել է այնպիսի երկրում, որտեղ տեղի են ունենում բանկային քարտերի հետ կապված ամենաշատ խաբեությունները: Սովորաբար, դրանք որոշ երկրներ են Ասիայում, Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: